ՆԱԽԱԳԻԾ

ՕՐԵՆՔԸ
«ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԵՎ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» 2002 թվականի փետրվարի 6-ի ՀՕ-305 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 15-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ տասնհինգերորդ պարբերությունով.

«Ձերբակալված կամ կալանավորված փաստաբանն ունի իրեն տեսակցության եկած՝ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի հետ առանձին, անարգել տեսակցելու իրավունք՝ առանց տեսակցությունների թվի և տևողության սահմանափակման, անկախ աշխատանքային օրերից կամ ժամերից: Ձերբակալված կամ կալանավորված փաստաբանի տեսակցությունը փաստաբանների պալատի նախագահի հետ տրամադրվում է այնպիսի պայմաններում, որոնցում ձերբակալվածներին պահելու վայրի կամ կալանավորվածներին պահելու վայրի ծառայողները նրանց կարողանան տեսնել, բայց չկարողանան լսել:»:

Հոդված 2. Օրենքի 48-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 8-րդ կետով՝

«8) Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահը՝ ձերբակալված կամ կալանավորված փաստաբանի հետ տեսակցելու համար»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԵՎ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սույն օրենքի նախագծի ընդունումը պայմանավորված է փաստաբանության ինստիտուտի հատուկ իրավական կարգավիճակով, գործունեության հանրային - իրավապաշտպան բնույթով և առավել խոցելի կարգավիճակում գտնվող փաստաբանների իրավունքների պաշտպանությամբ և հնարավոր խախտումները բացառելու անհրաժեշտությամբ:

Մասնավորապես, ՀՀ Սահմանադրության 64-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ իրավաբանական օգնություն ապահովելու նպատակով երաշխավորվում է անկախության, ինքնակառավարման և փաստաբանների իրավահավասարության վրա հիմնված փաստաբանության գործունեությունը: Փաստաբանների կարգավիճակը, իրավունքները և պարտականությունները սահմանվում են օրենքով:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատը (...) նույն օրենքի հիման վրա ստեղծված փաստաբանների մասնագիտական, անկախ, ինքնակառավարվող ոչ առևտրային կազմակերպություն է (...):

Նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է փաստաբանների պալատի խնդիրները, մասնավորապես՝ որպես այդպիսին դիտարկելով **իր անդամների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և կազմակերպությունների հետ փոխհարաբերություններում, ինչպես նաև դատարանում**:

Նույն օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝ փաստաբանների պալատի նախագահը փաստաբանների պալատի գործադիր մարմնի բարձրագույն պաշտոնատար անձն է:

Նույն հոդվածով սահմանված է, որ փաստաբանների պալատի նախագահը ներկայացնում է փաստաբանների պալատը:

Վերոգրյալ դրույթների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Փաստաբանների պալատը փաստաբանական ամբողջ համայնքի ներկայացուցիչն է և փաստաբանության սահմանադրական ինստիտուտի կարգավիճակի իրացման կառուցակարգային պայմանների ապահովման պատասխանատուն:

Վերոնշյալ համատեքստում Փաստաբանների պալատի վրա դրված է փաստաբանության ինստիտուտի և փաստաբանների շահերի ներկայացման, պաշտպանության և գործունեության կազմակերպական ապահովման հիմնարար գործառույթները:

Ավելի կոնկրետ, փաստաբանների պալատի՝ ի դեմս փաստաբանների պալատի նախագահի (որպես փաստաբանների պալատը ներկայացնող անձի), առջև դրված խնդիրներից է իր անդամների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և կազմակերպությունների հետ փոխհարաբերություններում, ինչպես նաև դատարանում:

«Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածը երաշխավորում է ձերբակալված կամ կալանավորված անձի՝ պաշտպանի, մերձավոր ազգականների և այլ անձանց հետ տեսակցելու իրավունքը:

Մասնավորապես՝ նույն հոդվածը սահմանում է.

«Ձերբակալված կամ կալանավորված անձն ունի իր պաշտպանությունը ստանձնելու նպատակով տեսակցության եկած փաստաբանի կամ իր պաշտպանի հետ առանձին, անարգել տեսակցելու իրավունք՝ առանց տեսակցությունների թվի և տևողության սահմանափակման, անկախ աշխատանքային օրերից կամ ժամերից»: Հոդվածի տեքստում հաջորդաբար և առավել մանրամասն տեղ է գտել ձերբակալված կամ կալանավորված անձի՝ պաշտպանի, մերձավոր ազգականների և այլ անձանց հետ տեսակցելու կարգը:

Ընդ որում, նույն հոդվածով որևէ առանձնահատուկ կարգավորում նախատեսված չէ ձերբակալված կամ կալանավորված փաստաբանի տեսակցության իրավունքն ապահովելու տեսանկյունից: Մինչդեռ,

պայմանավորված վերջինիս հատուկ կարգավիճակով՝ առաջանում է նաև փաստաբանի իրավունքների և օրինական շահերի հատուկ պաշտպանության անհրաժեշտություն, հատկապես քրեական արդարադատության և քրեակատարողական ոլորտում, երբ դրանք առավել խոցելի են:

Առաջարկվող իրավակարգավորմամբ առաջարկվում է «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» գործող օրենքում ձերբակալված կամ կալանավորված փաստաբանին վերապահել իրեն տեսակցության եկած՝ փաստաբանների պալատի նախագահի հետ առանձին, անարգել տեսակցելու իրավունք՝ առանց տեսակցությունների թվի և տևողության սահմանափակման, անկախ աշխատանքային օրերից կամ ժամերից: Նման մոտեցումը, մի կողմից, կբխի փաստաբանների պալատի կարգավիճակից՝ որպես փաստաբանի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը երաշխավորող մարմնի, իսկ, մյուս կողմից, օրենսդրական երաշխիքներ կստեղծվեն՝ ապահովելու փաստաբանի իրավունքների պաշտպանությունը և հնարավորինս բացառելու վերջինիս իրավունքների խախտումները:

ՏԵՂԵԿԱՆՔ
«ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԵՎ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՆՈՐ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ, ԳՈՐԾՈՂ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» օրենքում լրացում կատարելու մասին օրենքի նախագծի ընդունման կապակցությամբ նոր իրավական ակտերի ընդունման, գործող իրավական ակտերում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

ՏԵՂԵԿԱՆՔ
«ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԵՎ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՐՃԱՏՄԱՆ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ԱՎԵԼԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» լրացում կատարելու մասին օրենքի նախագծի ընդունման կապակցությամբ Հայաստանի Հանրապետության եկամուտների կրճատում և ծախսերի ավելացում չի նախատեսվում: